

ՍՏԵՓԱՆ ՕՀԱՆՋԱՆԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ (1873—1973)

Լրացավ 1945—1955 թթ. Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, անվանի գյուղատնտես և մանկավարժ Ստեփան Օհանջանի Կամսարականի ծննդյան 100-ամյակը:

Ս. Կամսարականը ծնվել է 1873 թվականի մայիսի 31-ին Սուրմալու գավառի Բլուր գյուղում: Նա իր սկզբնական կրթությունը ստացել է Իգդիրի տարրական դպրոցում, միջնակարգը՝ Երևանի գիմնազիայում: Այնուհետև նա ընդունվում է և 1899 թվականին ավարտում Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական և անտառային ինստիտուտը, իսկ 1912 թվականին, ներկայացնելով «Երևանյան նահանգի հողային հարկադրումը» թեմայով դիսերտացիոն աշխատանքը՝ ստանում է գիտնական գյուղատնտեսի աստիճան:

1902—1916 թվականներին Ս. Կամսարականն աշխատել է Ռուսաստանի և Անդրկովկասի մի շարք մարզերում և նահանգներում՝ վարելով սկզբում գավառային գյուղատնտեսի և ապա նահանգային գյուղատնտեսի պաշտոնները:

1916—1920 թվականներին Ս. Կամսարականը աշխատում է Երևանում՝ վարելով Երևանի նահանգի և Ղարսի մարզի երկրագործության ու պետական հողային գույքերի վարչության պետի, ապա նույն վարչության գլխավոր կառավարչի պաշտոնները:

1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ս. Կամսարականը նշանակվում է Հայաստանի հողագործության ժողովրդական կոմիսարի տեղակալ, իսկ 1921 թվականին՝ հողագործության ժողովրդական կոմիսար: Նույն թվականին Ս. Կամսարականը գործուղվում է Թիֆլիս՝ մասնակցելու անդրկովկասյան հանրապետությունների սահմանագծերի հաստատման աշխատանքներին:

Այնուհետև նա 1922—1924 թվականներին վարում է պատասխանատու զանազան պաշտոններ իր մասնագիտության գծով: 1924 թվականից մինչև 1931 թվականը եղել է ՀՍԽՀ Պետպլանի գյուղատնտեսական

մասնաճյուղի նախագահ, Պետպլանի նախագահության անդամ և գիտական խորհրդատու:

Ս. Կամսարականը Հայաստանում ծավալել է նաև մանկավարժական գործունեություն. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, նաև գյուղատնտեսական ինստիտուտում՝ ղեկավարելով միաժամանակ ընդհանուր երկրագործության, բամբակագործության և տեխնիկական կուլտուրաների ամբիոնի աշխատանքները:

1929 թվականից մինչև 1930 թվականը Ս. Կամսարականը եղել է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ: Նա աշխատակցել է զանազան հանդեսների և ամսագրերի: Նրա գրչին են պատկանում մասնագիտական բազմաթիվ աշխատություններ, այդ թվում և մենագրություններ:

1938 թվականից ի վեր, իր կյանքի վերջին շրջանում, Ս. Կամսարականն աշխատում էր գիտությունների ակադեմիայի երկրաբանության ինստիտուտում որպես գիտական աշխատող և ղեկավարում էր գրադարանի աշխատանքները:

Իր 60-ամյա պաշտոնավարության ընթացքում Ս. Կամսարականը իրեն դրսևորել է որպես բազմակողմանի գիտելիքների տեր և գործունյա մասնագետ: Նա օժտված էր կազմակերպչական մեծ ունակությամբ, ջերմ հայրենասեր էր և միշտ կանգնած իր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում:

1945 թվականի հունիսին Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական Ս. Կամսարականին ընտրում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: Հանգուցյալն իր սրտագին մասնակցությունն է բերել Գևորգ Զ կաթողիկոսի եկեղեցանվեր, հայրենաշեն գործունեությանը 1945—1954 թվականներին, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

1955 թվականի սեպտեմբերին ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունից հետո, երբ վերակազմում է Գերագույն հոգևոր խորհրդի կազմը՝ նկատի ունենալով Մայր Աթոռի հանդեպ Ս. Կամսարականի նվիրվածությունը, նրան ընտրում է Գերագույն հոգևոր խորհրդի պատվավոր անդամ:

Ս. Կամսարականը վախճանվում է 1955 թվականի հոկտեմբերի 16-ին, 82 տարեկան հասակում: